ARMENIAN NATIONAL PLATFORM
EASTERN PARTNERSHIP CIVIL SOCIETY FORUM

Funded by the European Union

HYEDZMERPAP HAYSANTA CHARITABLE FOUNDATION

# ՔԱՇԱԹԱՂԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ. ՕՐԵՆՔ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ


Արմենուհի Պետրոսյան

«Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամ

ԱԼԳ ՔՀՖ ՀԱՊ 4-րդ աշխատանքային խումբ



*Սույն հետազոտությունն իրականացվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հետազոտության բովանդակությունը բացառապես հեղինակի կարծիքն է և կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:*

*Սեպտեմբեր-հոկտեմբեր 2021*

**«Քաշաթաղից Հայաստան. օրենք և իրավունք» պիլոտային հետազոտության անհրաժեշտության հիմնավորումը**

2020 թ. Արցախյան պատերազմի հետևանքները ցավալի և աննախադեպ են. առաջացել են բազմաթիվ խնդիրներ, ի հայտ են եկել համալիր լուծումներ պահանջող հարցերի թնջուկներ։

Զոհերի և հայրենի բնակավայրերի կորստյան վիշտն անսահման խորն է, Արցախից բռնահանված հարյուր հազարավոր փախստականներ ժամանակավոր ապաստան են գտել Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում, առաջացել են օրենսդրական, հումանիտար, կրթական, առողջապահական և այլ բարդություններ, ծանր է տեղահանված մարդկանց սոցիալ-հոգեբանական վիճակը։

Պատերազմի արհավիրքը քաոս և հուսալքություն է տարածել։

Հարկավոր է հետևողական աշխատանքով, համակարգված կերպով և արժանապատվորեն դուրս գալ ճգնաժամից։ Անհրաժեշտ է տուն, հարազատներ, աշխատանք, հայրենիք կորցրած մարդկանց իրավական և սոցիալական երաշխիքներ առաջարկել, պայմաններ ստեղծել նրանց ներուժը հայաստանյան ոչ դյուրին հասարակական կյանքի մեջ ներառելու և ստեղծված ատիպիկ իրավիճակում հասարակական-քաղաքացիական ներգրավվածության հնարավոր բարենպաստ արդյունքներ ստանալու համար։

Հետազոտական սույն առաջարկի գաղափարը հղացվել է պատերազմի ընթացքում և հետագա ամիսներին «Հայ Ձմեռ պապի»՝ Արցախից (Մարտունի, Մարտակերտ, Հադրութ, Քաշաթաղ, Շուշի, Ստեփանակերտ) տեղահանված ընտանիքների ու խմբերի հետ սոցիալական և կրթամշակութային ծրագրեր իրականացնելու ընթացքում՝

https://www.facebook.com/media/set?vanity=haysanta01&set=a.2802349380037096

https://www.facebook.com/media/set/?vanity=haysanta01&set=a.2831060750499292

https://www.facebook.com/media/set/?vanity=haysanta01&set=a.2818056315133069

https://www.facebook.com/media/set/?vanity=haysanta01&set=a.2738545756417459

https://www.facebook.com/karine.movsesyan.9/posts/4067298060055342:

Ըստ մեր դիտարկումների՝ պետության ծրագրերը, մարդասիրական և բարեգործական կազմակերպությունների ու անհատ անձանց օժանդակությունները տակավին բավարար և հետևողական չեն։ Ուստի տվյալներ հավաքելու, հետազոտելու, համակարգելու և լուծումների մոդելներ առաջարկելու առաջնային անհրաժեշտություն կա, ինչին էլ միտված է մեր պիլոտային հետազոտությունը։

**Հետազոտության առարկան**. Արցախի Քաշաթաղի շրջանից բռնահանված և Հայաստանի տարբեր մարզերում ժամանակավոր բնակություն հաստատած քաղաքացիների

- կարիքների վերհանում,

- աշխատանքային, կրթական, ստեղծագործական ներուժի գնահատում,
- իրավագիտակցության բարձրացում,
- հնարավոր ծրագրային առաջարկների ներկայացում։

**Նպատակները և մեթոդաբանությունը**

44-օրյա պատերազմում կրած պարտությունը, Քաշաթաղի անհասկանալի, անտրամաբանական հանձնումը, բնակչության տարերային բռնահանումը, Հայաստանի տարբեր մարզերում հազարավոր ընտանիքների դիպվածային բնակեցումը, նրանց այսօրվա խնդիրների ուսումնասիրությունը, ապագայի երաշխիքների պահանջ բարձրացնելը հարցեր են, որոնք կարիք ունեն հանգամանորեն ուսումնասիրվելու և բարձր հնչեցվելու։ Սույն հետազոտության նպատակները փաստագրական, նկարագրական ու բացատրական են, օգտագործվել է խառը մեթոդների պրակտիկան՝ համադրելով այցերը, խմբային հարցազրույցները, հեռախոսային հարցումները, փաստաթղթերի վերլուծությունը և ԶԼՄ-ների տեղեկությունները։

**Խնդրի բովանդակությունը**

2020 թ. սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով Քաշաթաղից բռնահանվել է շուրջ 3000 (որոշ տվյալներով՝ 4000) ընտանիք։ Արցախում նրանց զբաղվածության ոլորտները հետևյալն են եղել. Քաշաթաղի հարավում՝ գյուղատնտեսություն, հյուսիսում՝ անասնապահություն, քաղաքային բնակավայրերում՝ վարչական աշխատանք։ Մեծ թիվ են կազմում բազմազավակ ընտանիքները, դպրոցահասակ երեխաների թիվը 1000 է, մանկավարժության բնագավառում աշխատանքի փորձ ունեցողներինը՝ շուրջ 800։ «Վերադարձ դեպի Քաշաթաղ» հասարակական կազմակերպության բազայում գրանցված ընտանիքների տեղաբաշխման պատկերը ՀՀ մարզերում հետևյալն է՝

Արագածոտն - 25 ընտանիք,

Շիրակ - 70 ընտանիք,

Արարատ - 150 ընտանիք,

Արմավիր – 40 ընտանիք,

Վայոց Ձոր – 130 ընտանիք,

Լոռի - 50 ընտանիք,

Կոտայք – 100 ընտանիք,

Գեղարքունիք - 20 ընտանիք,

Տավուշ - 10 ընտանիք,

Սյունիք - 250 ընտանիք,

Երևան- 470 ընտանիք։

(Տվյալները շարունակ փոփոխվում են՝ պայմանավորված քաշաթաղցիների տեղաշարժով)։

Այս ընտանիքներն օգտվում են պետական աջակցության ծրագրերից (ընդսմին՝ հաճախ լուրջ խնդիրների ուղեկցությամբ) և բարեգործական կազմակերպությունների օժանդակությունից։ Ցավոք, որոշ ընտանիքներ արդեն արտագաղթել են Հայաստանից։

**Քաշաթաղցի բռնահանվածների առանցքային խնդիրները՝**

- կարգավիճակ,
- բնակարանով ապահովում,
- աշխատանքի տեղավորում,
- կորսված գույքի փոխհատուցում,
- նախքան պատերազմը Արցախում ձևակերպված վարկային պարտավորությունների զրոյացում,
- այլ։

Կործանարար պատերազմից անցել է ավելի քան մեկ տարի, սակայն այս հիմնախնդիրները մնում են թերի լուծված կամ չլուծված։ Մասնավորապես՝ մարդիկ, որոնք ապրել և շենացրել են Քաշաթաղը, մասնակցել են Արցախի պաշտպանության համար մղվող մարտերին, մարդիկ, որոնցից շատերը թանկ զոհեր են տվել, նյութական և բարոյական լուրջ վնասներ կրել, աշխատանք կորցրել և հայրենազրկվել, այսօր հաճախ չեն կարողանում օգտվել պետական աջակցություններից. մի մասը՝ թյուրիմացաբար կամ ինչ-ինչ պատճառներով ցուցակներում (աշխարհազորայինների վճարների, 300.000-250.000 դրամ պետական աջակցության, հյուրընկալման գումարների) չընդգրկվելու հետևանքով, մի մասը՝ աշխատանքները ոչ պատշաճ կազմակերպելու պատճառով։ Խնդրո առարկա հարցերով զբաղվող համապատասխան կառույցներին ուղղված բազմաթիվ նամակները, դիմումները, բողոքները հիմնականում մնացել են անպատասխան, իսկ հեռախոսազանգերով ստացվող պատասխանները սպառիչ չեն եղել։ Արդյունքում՝ աջակցություններից օգտվող շահառուների համար ստեղծվել են արհեստական խոչընդոտներ։ Պատերազմի արհավիրքներով անցած, Հայրենիք ու հարազատներ կորցրած, աննախադեպ իրավիճակում հայտնված տնանկ

մարդկանց անհամար կարիքները բախվել են պատկան մարմինների ոչ պրոֆեսիոնալ գործունեությանը և ժամանակ առ ժամանակ հանգեցրել կոնֆլիկտների: Կառավարության շենքերի դիմաց հաճախ տեղի են ունեցել Քաշաթաղից բռնահանվածների բողոքի ցույցեր:[1]

Այս իրավիճակի հանգամանալից հետազոտությունն ու հնարավոր ելքերի առաջադրումն անհետաձգելի անհրաժեշտություն են:

……

Ծրագրի նպատակներն իրականացնելու ընթացքում հանդիպել ենք Քաշաթաղից բռնահանված քաղաքացիների տարբեր թիրախային խմբերի, այցելել ենք Հայաստանի մարզերում ժամանակավոր ապաստան գտած ընտանիքների, առկա կամ առցանց հարցումներ ենք անցկացրել:

Ծրագրով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության **բոլոր** մարզեր կատարվելիք ֆիզիկական այցերն իրականացնելուն խանգարել է կովիդի համաճարակի ակտիվացումը՝ Հայաստանն այս ընթացքում հայտնվել է ԵՄ կորոնավիրուսի տարածման ցուցանիշով վտանգավոր՝ կարմիր գոտում: Ուստի որոշ ֆիզիկական այցեր փոխարինվել են առցանց ձևաչափի հանդիպումներով կամ հեռախոսազրույցներով:

Ծրագրի իրականացման ընթացքում համագործակցել ենք «Վերադարձ դեպի Քաշաթաղ» հասարակական կազմակերպության հետ: Խնդիրները դասակարգելու, ապագա նախագծերը թիրախային դարձնելու և հետագա օժանդակության հասցեական գործողություններ մշակելու նպատակով հանդիպում ենք կազմակերպել բռնահանված քաշաթաղցիների ներկայացուցիչների հետ:





[1] https://a1plus.am/hy/article/411755?fbclid=IwAR0lsVBzNMHq164qFc9Q2AUUwzUnvE0AgKAfhM28TH5RoG-UHQFjC2VAFd4
https://www.facebook.com/watch/?v=1027931501307947

Հրավիրել ենք նաև Հայ օգնության ֆոնդի և Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի ղեկավարներին, որոնք մարդասիրական և տեղեկատվական ծրագրեր իրականացնելու պատկառելի փորձ ունեն:[2]

Հանդիպման ընթացքում քննարկվել են վերը նշված խնդիրները (կարգավիճակ, աշխատանք, բնակարանով ապահովում, կորսված գույքի փոխհատուցում, նախքան պատերազմը Արցախում ձևակերպված վարկային պարտավորությունների զրոյացում և այլն)։

Առհասարակ, «Վերադարձ դեպի Քաշաթաղ» հասարակական կազմակերպության գրասենյակը քաշաթաղցիներն համախմբելու և նրանց տնտեսական ու իրավական հնարավոր գործողությունները նախանշելու իսկական շտաբի է վերածվել  որտեղ քաշաթաղցիք հնարավորություն ունեն պարբերաբար հավաքվել, տեսակցել ու զրուցել, իրենց խնդիրները ներկայացնել ու քննարկել։ (Գրասենյակը 1 տարով վարձակալել է բարերարը, ուստի շուտով այս հնարավորությունը նույնպես հարցականի տակ է դրվելու)։

Քաշաթաղցիների բնակարանային խնդրի՝ Կառավարության որոշման նախագիծը, որը զետեղված է e-draft կայքում՝ https://www.e-draft.am/projects/3552/about (ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ), հանգամանորեն քննարկվել և առաջարկներով լրամշակված՝ ներկայացվել է կառավարություն։ Որոշման նախագծին դեմ է արտահայտվել առցանց քննարկման մասնակիցների 84%-ը։ Քննարկման հարթակում կան թե՛ որակումներ («նախագիծը ոչ թե բոլոր կետերով սխալ է, այլ նվաստացուցիչ ու վիրավորական քաշաթաղցիների համար), թե՛ առաջարկներ (https://www.e-draft.am/en/projects/3552/digest) ։

28.10.2021-ին կառավարությունում կայացած հանդիպման ընթացքում մասնակի համաձայնության են եկել ներկայացված հարցերի շուրջ։ Որոշման նախագիծը դեռ վերջնականացված չէ, քաշաթաղցիների պայքարն իրենց իրավունքների համար շարունակվում է, և դա նրանց բարձր իրավագիտակցության և տոկունության արդյունքն է։

**Քաշաթաղցիների քաղաքացիաիրավական ակտիվությունը**

Քաշաթաղի 10 հազար բնակիչ ունեցող շրջանը՝ 120 գյուղերով, 44-օրյա պատերազմի ընթացքում 2 ժամվա մեջ դատարկվեց և հանձնվեց ադրբեջանցիներին։ Պաշտոնապես հայկական հսկողության տակ են մնացել միայն Բերձոր քաղաքը, Աղավնո և Սուս գյուղերը։ Ակտիվ շփումները կառավարության հետ սկսվել են փետրվարի 3-ից, երբ անելանելի վիճակում հայտնված, բռնահանված քաշաթաղցիների ներկայացուցիչները հանդիպել են փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի հետ ու հավաստիացում ստացել, որ խնդիրները կքննվեն (https://www.gov.am/am/news/item/14972/)։ Նրանք հիշեցրել են, որ իրենք 90-ականներին հենց

[2] https://www.facebook.com/media/set/?vanity=haysanta01&set=a.3019527648319267

կառավարությա՛ն ծրագրով են վերաբնակեցվել Քաշաթաղի շրջանում և հիմա՝ պատերազմից հետո, մնացել են ձեռնունայն ու անտեսված: Տեղահանվածների հարցը լուծելու համար հատկացվել է 110 մլրդ դրամ գումար, բայց համակարգված ծրագրային լուծումներ, ըստ բռնահանվածների, չեն առաջարկվել:

Հանդիպումից ամիսներ անց Արցախից տեղահանված մարդիկ հասկացան, որ իրենց համար կենսական նշանակություն ունեցող հարցը ձգձգվում է, ինստանցիայից ինստանցիա փոխանցվում: Ըստ Քաշաթաղի շրջանի Հայկազյան համայնքի ղեկավար Արմեն Չոմոյանի՝ իրենց պահանջներն ուղղված են Արցախի և ՀՀ իշխանություններին միաժամանակ, «քանի որ տեղահանման որոշումը միասին են ընդունել» (https://www.youtube.com/watch?v=9pvH-NKF978): Պատերազմական գործողությունների թեժ պահին՝ հոկտեմբերի 18-ին, հրատապ՝ ընդամենը 2 ժամվա ընթացքում, թողնելով տասնամյակների ընթացքում ստեղծած ամեն ինչ՝ տուն, գույք, ունեցվածք, գյուղատնտեսական տեխնիկա, անասուններ, այգիներ, քաշաթաղցիները հապշտապ փախուստի են դիմել: Կան հարազատի կորուստներ կրած բազմաթիվ քաշաթաղցիներ, որոնք նույնպես ցուցարարների շարքում են: 03.05.2021-ին Կառավարության շենքի դիմաց բռնահանված արցախցիների բողոքի ակցիայի արդյունքում վարչապետի օգնական Նաիրի Սարգսյանն առաջարկել է 5 ներկայացուցչից բաղկացած պատվիրակություն կազմել և քննարկել խնդիրները:

Մոտալուտ ձմեռվա և ցրտերի հեռանկարը քաշաթաղցիների բազմաթիվ խնդիրներից բնականորեն առաջնային է դարձնում հատկապես կացարանի հարցը: Քաշաթաղից բռնահանված որոշ ընտանիքներ ապաստանել են իրենց ազգականների տներում՝ շնորհիվ վերջիններիս բարի կամքի արտահայտության, սակայն դա ապաստանի հարցի հիմնավոր լուծում չի կարող համարվել: «Վերադարձ դեպի Քաշաթաղ» ՀԿ նախագահ Ազատ Եղոյանի խոսքերով՝ «քաշաթաղցիներն ապրում են մանկապարտեզներում, դպրոցներում, լքված շինություններում, հարազատների տանը, վարձով… Խնդիրը պետք է լուծում ստանա, ոչ մարդկային պայմաններում՝ դիմացը ձմեռ է». (09.07.2021.https://youtu.be/oUHYoXVNRTo):

Ըստ «Վերադարձ դեպի Քաշաթաղ» ՀԿ-ի կազմակերպիչ, Բերձորի հ.1 դպրոցի տնօրեն Անահիտ Կոսակյանի՝ «Բնակիչների 90 տոկոսը պատրաստ է բնակությանը հարիր կենսապայմանների վերականգնման պարագայում վերադառնալ Քաշաթաղ, բայց քանի որ այսօր այնտեղ չեն գործում ո՛չ ոստիկանությունը, ո՛չ առողջապահությունը, ո՛չ ազգային անվտանգությունը, ո՛չ զինկոմիսարիատը, բնականաբար, էսօր էնտեղ երեխա, բնակիչ ապրելը ծանր պատասխանատվություն է, որը կազմակերպությունը չի կարող վերցնել: Մարդիկ ժամանակավորապես ապրում են հյուրանոցներում, լքված շինություններում, և դա երկար չի կարող տևել: Քաշաթաղցիները եղել են միշտ էլ շենացնող, արարող, … ապրել ենք արժանապատիվ կերպով և ուզում ենք մեր կյանքը շարունակել այդ կերպ». (09.07.2021. https://youtu.be/IMUNlZJvpzA):

Կարինե Մովսեսյանը, նշելով, որ գրեթե բոլոր քաշաթաղցիները պատերազմի հետևանքով մնացել են անտուն, իրավական խնդիր է բարձրացնում. «Ոչ մի կարգավիճակ չենք ստացել, ուղղակի տեղահանվածի կարգավիճակ, և դրա պատճառով այսօր ո՛չ տուն ունենք, ո՛չ աշխատանք… Առաջնահերթ բնակարանային խնդիրն է… Կառավարությունը քայլ չի արել, քայլ արել ենք մենք. սա 3-րդ անգամ է, որ հավաքվում ենք, մեր 2 ներկայացուցիչն ընդգրկված են Մհեր Գրիգորյանի հանձնաժողովի մեջ, բայց մինչև օրս մենք ոչ մի պատասխան չենք ստացել». https://youtu.be/yZXUcekW70U:

Ցույցերի ընթացքում Քաշաթաղի շրջանի Հայկազյան համայնքի ղեկավար Արմեն Չոմոյանը, խոսելով ներկայացված ծրագրի մասին, ասում է.«Կառավարությունը առաջարկում է Հայաստանում տներ ձեռք բերելու նպատակով հատկացնել 10 մլն. դրամ: Եթե Երևան քաղաքը հանում ենք արանքից, հա, հնարավոր է շրջաններում ձեռք բերել բնակարան… Երբ հավանական շահառուները կճշտվեն, Արցախի կառավարությունը կուղարկի ցուցակները, ՀՀ կառավարությունն արագ կերպով կլուծի այդ հարցը… Մենք բավարարված չենք, բայց ուրիշ ելք չունենք»:

Հաշվի առնելով, ակայն, սպասվող ընդհանուր գնաճն ու շուկայի արձագանքը բնակարանային սուր պահանջին, քաշաթաղցիների մեծ մասը կասկածի տակ են դնում նաև այդ գումարով տուն ձեռք բերելու հնարավորությունը:

Պետական մարմինների անհամարժեք պատասխանը նշված խնդիրներին է՛լ ավելի է գեներացնում տնանկ, իրենց խաբված համարող, ապագայի հեռանկարներ չտեսնող քաշաթաղցի-ների բողոքի ալիքը: 02.09.2021-ին դարձյալ ցույց է տեղի ունենում կառավարության շենքի առաջ. մասնակիցների մեջ կան նաև Գորիսից, Կապանից ժամանածներ: Հենց փողոցում քննարկվում են պայքարի տարբեր միջոցներ, կառավարությանը 1 շաբաթ ժամանակ են տալիս՝ քաշաթաղցիներին խնդիրների լուծման նախագիծ առաջարկելու համար, սեպտեմբերի 9-ին հավաքվելու և պահանջները բավարար չհամարելու դեպքում առաջարկում են նստացույց անել[3]:

09.09.2021. Պայմանավորված օրը Կառավարության շենքի մոտ հավաքված քաշաթաղցիները դարձյալ ցույց են անում:[4] Բերձորի մարզադպրոցի տնօրեն, «Վերադարձ դեպի Քաշաթաղ» ՀԿ-ի կազմակերպիչ Կարինե Մովսեսյանը Քաշաթաղի ՏԻՄ տարհանված ղեկավարներին կոչ է անում համագործակցել քաշաթաղցիների խնդիրներով զբաղվող ՀԿ-ների հետ, միասնականացնել տեսակետները և հրապարակել արդյունքները: «Այսօր մեր մեջ չենք տեսնում ո՛չ մի համայնքի ղեկավար: Չենք տեսնում ո՛չ մի պաշտոնյա մարդ, որն այս աշխատանքը պետք է կատարեր մեր փոխարեն և պետք է քաշաթաղցու կարիքը հոգար: Այս նախագծի մեջ գրված է, որ Քաշաթաղի շրջանից տեղահանվել է ընդամենը 950 ընտանիք: Հետ տվեք Քաշաթաղում իմ ապրած տարիները: Մնացած քաշաթաղցիներն ո՞վ են եղել այդ դեպքում: Հերիք է մեզ ձեռ առնեք»: Որպես կարծիքների, գաղափարների, տեսակետների քննարկման միասնականացման հնարավորության օրինակ է բերում ֆեյսբուքյան իրենց կայքը, որը Քաշաթաղից բռնահանվածների կարիքներն ու խնդիրները ներկայացնող համապարփակ հարթակի է վերածվել:

21.10.2021-ին տեղի ունեցավ քաշաթաղցիների ու Արցախի մյուս շրջաններից բռնահանվածների հանդիպումը[5] ԱԺ ընդդիմադիր պատգամավորների հետ:

Նշվեց, որ 1 տարի է անցել, բայց դեռ չի կատարվել ընտանիքների կարիքների գնահատում՝ սկսած արցախցիների՝ Արցախ վերադառնալու ցանկությունից, վերջացրած իրենց գլխին ծածկ ունենալու սուր անհրաժեշտությամբ: Հարկ է խմբավորել կարիքները և լուծման ճանապարհներ գտնել՝ ըստ առաջնայնության: Տարերային, ոչ հասցեական

[3] https://a1plus.am/hy/article/411755?fbclid=IwAR0lsVBzNMHq164qFc9Q2AUUwzUnvE0AgKAfhM28TH5RoG-UHQFjC2VAFd4

[4] https://www.facebook.com/watch/?v=1027931501307947

[5] https://www.facebook.com/24news.am/videos/370425044821516

օժանդակությունները բերել են գումարների փոշիացման՝ գործում է Խ-Ծ-Բ սկզբունքը, հաճախ առավել կարիքավորները մնում են անտեսված, սոցիալական ծրագրերը հանգեցվել են միայն գումար բաժանելուն: Նույն խնդիրները նաև Արցախում են՝ ավելացրած նաև արտագաղթը: Առաջարկվեց առաջնորդվել ոչ թե սոցիալական հավասարության, այլ սոցիալական արդարության սկզբունքով:

**Իրավունքի** տեսանկյունից ամենասկզբունքային հարցը կարգավիճակի խնդիրն է: Բռնահանումից արդեն 1 տարի է անցել, բայց խորհրդարանում «Արցախ-Հայաստան» հանձնաժողով ստեղծելու առաջարկը դեռ չի իրականացվել:

Բռնահանվածներից ոմանք պահանջում են փախստականի կարգավիճակ տալ, ոմանք՝ ներքին տեղահանվածի: Պատկան մարմիններին դիմելիս նրանք կա՛մ լռության են բախվում, կա՛մ չինովնիկական խուսափումների:

«Խախտված է հենց **ապրելու իրավունքը**. անկախ մեր կամքից՝ հայտնվել ենք նոր իրավիճակում, և կյանքը շարունակել ու առաջ գնալ առանց պետական ծրագրերի՝ հնարավոր չէ: Միայն որոշ հատուկենտ մարդիկ են հաջողել՝ նրանք, ովքեր հովանավորներ ունեն, մյուսներն անհույս վիճակում են:

**Բնակարանի իրավունք**. «Անգամ եթե ոմանք վաստակում են, իրենց վաստակը հիմնականում բնակվարձի վրա են ծախսում», Կարինե Մովսեսյանն է ներկայացնում:

«Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների համագումարի» համակարգող Մարիամ Ավագյանի սուր հարցադրումներն ի մի են բերում խնդիրը՝ մատնանշելով Արցախյան առաջին պատերազմից հետո թույլ տրված իրավական բացթողումները:

Կարգավիճակի գնահատականի անորոշության հետևանքով խախտվում են մարդու հիմնարար իրավունքները: Խոսելով տասնամյակներ շարունակ «լողացող» կարգավիճակի անկատարության մասին, Մարիամ Ավագյանը ներկայացնում է Ադրբեջանի կազմում էթնիկ հայերի նկատմամբ իրականացվող բնաջնջման քաղաքականությունը և որպես հիմնարար իրավունք՝ բարձրացնում է **ցեղասպանությունից փրկվելու իրավունքը.**

«Ո՞ր երկրի քաղաքացի է Արցախից բռնի տեղահանված հայը: 2005 թվից «փախստական» բառը հանվեց կոմիտեի անունից և այն վերածվեց միգրացիոն ծառայության: Իրականում «փախստականն» ու «ներքին տեղահանվածը» որևէ առնչություն չունեն միգրանտի հետ: Եթե

Սումգայիթը գնահատվեր որպես ցեղասպանություն, ապա այսօր բռնահանվածները կարող էին կոչվել «շարունակական ցեղասպանությունից» փախած հայեր։

Ժամանակին Սումգայիթից փախած հայի մասին միջազգային ատյաններում քաղաքական հարց չբարձրացնելու հետևանքով այսօր էր ՄԱԿ-ը «ներքին տեղահանվածին» համարում է **սոցիալ-տնտեսական փախստական**։ Ինչպե՞ս կարող է նույն մարդը սոցիալական առումով համարվել փախստական, իրավական առումով՝ ոչ։ Քանի որ ՀՀ-ն չի ճանաչել միացումը, ըստ ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ ստացվում է, որ Արցախից բռնի տեղահանվածը պետք է փախստական ճանաչվի։ Մյուս կողմից՝ քանի որ նույն էթնիկ խումբն է՝ հայ մարդն Արցախից տեղափոխվել է հայ մարդու պետություն՝ Հայաստանի Հանրապետություն, իրավաբանորեն փախստական չի, բայց **սոցիալ-տնտեսական առումով հավասարեցված է փաստականի**։ Դրա համար էլ ՄԱԿ-ը սոցիալ-տնտեսական աջակցություն է ցուցաբերում՝ չճանաչելով փախստականի կարգավիճակը», - ԱԺ պատգամավորների հետ հանդիպման ընթացքում նշում է Մարիամ Ավագյանը։

Արցախից բռնահանված քաղաքացիների հիմնախնդիրը, սակայն, միջազգային հարթակներում նույնպես դեռևս խորապես ուսումնասիրված և գնահատված չէ։ Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը ներկայացնում է Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախից բռնահանված հազարավոր քաղաքացիների իրավունքների պաշտպանության հարցում միջազգային աջակցության անհամարժեքության հարցը.

«Փախստականների և տեղահանված անձանց իրավունքների պատշաճ պաշտպանության ապահովման համար միջազգային իրավակարգավորումներով սահմանված են պետության և միջազգային կազմակերպությունների պարտավորությունները։ Ընդ որում, եթե պետությունն ունի սահմանափակ ռեսուրսներ և կարողություններ, ապա միջազգային հանրությունը պետք է գործուն աջակցություն ցուցաբերի այդ անձանց իրավունքների իրացման հարցում։ Ցավոք, ինչպես 1990-ականների պատերազմի հետևանքով, այնպես էլ այս անգամ փախստականների և տեղահանվածների խնդիրներին լուծումներ տալու ամբողջական բեռն ընկել է Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության վրա։ Ցուցաբերվող միջազգային աջակցությունը խիստ անհամարժեք է ստեղծված իրավիճակին և առկա խնդիրներին։ Սրա հիմնական պատճառներից է այն, որ միջազգային կազմակերպությունները, որոնք առաջնային մանդատ ունեն հենց փախստականների և տեղահանված անձանց հարցերով, չեն կարողանում մուտք գործել Արցախ՝ առաջին հերթին հենց տեղում իրավիճակին ծանոթանալու և կարիքների գնահատում իրականացնելու համար։

Ինձ մոտ առկա է համոզմունք, որ համապատասխան կազմակերպությունները իրենք ևս գիտակցում են իրենց պատասխանատվությունն ու Արցախում գործունեություն ծավալելու

անհրաժեշտությունն ու կարևորությունը, սակայն տրվում են ադրբեջանական սադրանքներին և մարդու իրավունքների պաշտպանությունը ստվերում են քաղաքական հարցերով: Մենք շարունակելու ենք մեր պայքարը այս հարցում՝ հավատարիմ մնալով մարդու իրավունքների համընդհանրության և առաջնահերթության սկզբունքներին:[6]

**Բռնահանվածների կենսապայմանները**

Հապշտապ տարերային բռնահանումից հետո արցախցիները ժամանակավոր կացարան են գտել ՀՀ մարզերում: Համեմատաբար կայուն և արժանապատիվ է այն ընտանիքների վիճակը, որոնք նախկինում Հայաստանում տուն են ունեցել: Մյուսներն ապաստանել են կա՛մ ազգականների բնակարաններում, կա՛մ պետության առաջարկած կացարաններում: Ստորև կբերենք որոշ օրինակներ, որոնք պատկերացում կտան քաշաթաղցիների կենսապայմանների մասին:

**Կոտայքի** տարածքային մանկավարժա-հոգեբանական աջակցության կենտրոնի շենքում բնակություն հաստատած ավելի քան 20 ընտանիքի առաջ հարց է դրվել ազատել շենքը: Նախորդ տարվանից կառավարությունը որպես սոցիալական աջակցություն տեղահանված մարդկանց տրամադրում էր ամսական 68 հազարական դրամ, որը տուն-տեղ կորցրած, պետության տրամադրված կացարաններում կամ վարձով ապրող արցախցիների համար կեցության հիմնական գումարն էր: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի՝ «սոցապնախարարությունից տեղեկացնում են, որ այժմ աջակցության նոր ծրագիր է սպասվում: Գերատեսչությունից պարզաբանում են, որ հոկտեմբերի երկրորդ տասնօրյակում նախագիծը կառավարություն կտանեն, հավանության արժանանալու դեպքում սեպտեմբերի գումարը ևս կվճարվի: Նոր ծրագիրը, սակայն, ենթադրելու է ոչ թե 68, այլ ամսական մինչև 50 հազար դրամի աջակցություն:

Հյուրընկալության նոր ծրագիր առայժմ չկա: Չկան առաջարկվող ելքեր՝ ի՞նչ պետք է անի մարդը այս ընթացքում, եթե գործադիրը հոկտեմբերի երկրորդ կեսին պետք է քննարկի սեպտեմբերից սկսվող ծրագիրը: Տեղահանված արցախցիները տարակուսում են՝ իսկ 50 հազար դրամով վարձով տուն հնարավո՞ր է գտնել». (https://youtu.be/iuhef3vfJRU):

[6] https://artsakhtert.com/arm/index.php/society/item/32095-2021-07-28-13-12-39

Համեմատաբար բարվոք վիճակում են Ծաղկաձորի երիտասարդական կենտրոնում

ապաստանած քաշաթաղցիները: Մեր այցի ժամանակ նրանք գոհունակություն արտահայտեցին կեցավայրի պայմաններից, բայց ասացին, որ, ի տարբերություն անցյալ տարվա, երբ ծախսերը հոգացել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, այս տարի իրենք պետք է կատարեն կոմունալ բոլոր վճարումները. (https://youtu.be/0A4tbvEcQlI):

Իսկանդարյան Սրբուհին պատմում է Քաշաթաղի իրենց կյանքի ու Արցախից բռնահանվելուց հետո անորոշ ապագայի մասին. (https://youtu.be/OA7xX0IH4jQ):

**Արագածոտնի** Աշտարակ քաղաքում բարեկամի տանն է ապաստանել 64–ամյա Վոլոդյա Գալստյանը (ընտանիքի անդամների թիվը՝ 10): Բերձորում զբաղվել է գյուղատնտեսությամբ, մեղվաբուծությամբ, հիմա աշխատանք չի գտնում: Աղջիկն, ունենալով բուժքրոջ մասնագիտություն, հաջողությամբ աշխատանքի է տեղավորվել: Ընտանիքի անդամները չեն վարանում՝ ցանկացած գործ համարում են պիտանի և պատվական. փեսան, որը Բերձորի քաղաքապետարանի մշակույթի բաժնի վարիչն է եղել, այժմ աշխատում է բենզալցակայանում, տղան՝ Բերձորի քաղաքապետի նախկին տեղակալը, պահակի գործ է գտել: Մասնագիտական ներուժի նման վատնումն ափսոսանքի է արժանի:

**Շիրակի** մարզի Գյումրի քաղաքում է հաստատվել 36-ամյա Արմինե Մնոյանը (ընտանիքի անդամների թիվը՝ 4): Սկզբում վարձով են ապրել, բայց հետո աստիճանաբար կարգի են բերել պապենական հին տունը և տեղափոխվել են այնտեղ ապրելու: Արմինեն Բերձորում ուսուցչուհի է աշխատել, ամուսինը՝ «Հայէներգո»-ում հսկիչ: Գյումրիում աշխատանք չեն գտել: «Սիրով իմ մասնագիտական կարողությունները կծառայեցնեի, բայց հազար ձևի փորձում եմ, չի ստացվում, հնարավոր չի: Պատրաստ եմ ցանկացած աշխատանք կատարել»: Երեխաները 8 և 10 տարեկան են, փոքր երեխան աուտիզմ ունի: Բարերարներից ջեռոց է նվեր ստացել, պետք է փորձի թխելով վաստակել:

**Արարատի** մարզի Մասիս քաղաքում՝ քրոջ տանն է տեղավորվել 46-ամյա Անդրանիկ Եսայանի ընտանիքը (6 անձ): Քաշաթաղի շրջանի վիճակագրական վարչության պետն է եղել, ներկայումս աշխատում է գիշերային պահակ: Քաշաթաղում հզոր տնտեսություն է ունեցել, հող մշակել, թռչուն ու խոզ պահել, հացի փուռ աշխատեցրել: Հասցրել է փռի սարքավորումները բերել, երազում է որևէ գյուղում տուն գնել, նոր տնտեսություն հիմնել, հաց թխել:

**Վայոց Ձորի** Վայք քաղաքում է ապրում 35-ամյա Գարիկ Ալոյանը: Քաշաթաղի Ծաղկաբերդ գյուղի համայնքապետարանում աշխատել է որպես ակումբավար, շեն տուն ու այգիներ է ունեցել: Թողել է տունը, մեքենան, ամբողջ կայքը: Հիմա կնոջ ու 3-12 տարեկան չորս երեխաների հետ ապրում է հաշմանդամ հոր տանը: Մտադիր է Մասիսում հող գնել, տուն կառուցել, ջերմոցային բիզնեսով զբաղվել: «4 պատ ու տանիք որ լինի, ինքներս աստիճանաբար կտնավորվենք»:

**Տավուշի մարզի** Դիլիջան քաղաքի «Իմպուլս» պանսիոնատում է բռնահանվելուց հետո տեղավորվել 30-ամյա Անդրանիկ Վարդանյանը: Քաշաթաղում գյուղատնտես է աշխատել: Այժմ Երևան է տեղափոխվել, տուն վարձել, Արցախի օպերատիվ շտաբի վերաբնակեցման բաժնում աշխատանք է գտել:

**Գեղարքունիքի մարզի** Փոքր Մասրիկ գյուղում է ապրում 26-ամյա Մարիամ Վարդանյանը: Արցախում 2000 քմ հող են ունեցել, այգիներ, 2 տուն, 2-րդը նոր էին կառուցել՝ չեն էլ հասցրել վայելել: Աշխատել է Բերձորի հ. 1 դպրոցում որպես ֆիզիկայի ուսուցչուհի: Այժմ ընտանիքի 4 անդամներով ապրում են տատիկի տանը, փոքրիկ հողակտոր ունեն, կարտոֆիլ ու լոբի են մշակում:

**Սյունիքի մարզի** Որոտնավան գյուղում ընկերոջ հետ փոքր տուն է գնել և մեղվաբուծությամբ է զբաղվում հայտնի ազգային գործիչ, 1990-1995 թ.թ. Հայաստանի ԳԽ և 2000-2005 թ.թ. Արցախի խորհրդարանի պատգամավոր Տիգրան Կյուրեղյանը: Պատերազմից հետո ընտանիքով տեղափոխվել է կնոջ հայրական տուն՝ Հրազդան, բայց մեղվաբուծությամբ զբաղվելու նպատակով հաստատվել է Որոտնավանում:

Կյուրեղյանների ընտանիքի պատմությունն առանձնահատուկ հետաքրքրություն ունի. կինը՝ Անահիտը, մասնակցել է «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» միջազգային կրթական կազմակերպության ամենամյա մրցույթին և որպես ծրագրի մասնակից աշխատանքի է անցել Արուճ գյուղում:

2021 թ. ԱԺ արտահերթ ընտրություններից առաջ մամուլում տարածվեց Կյուրեղյանների՝ ՀՀ-ում իրենց ընտրական իրավունքը վերականգնելու պատմությունը: Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Հրազդանի բաժանմունքում նրանց մերժել են, սակայն որևէ լուրջ հիմնավորում չեն ներկայացրել: «Անձնագրային սեղանի պետը ասաց, որ քանի որ մենք Արցախի քաղաքացիներ ենք, ապա չենք կարող ընտրություններին մասնակցել: Ես պնդեցի, որպեսզի իմ գրավոր դիմումն ընդունեն, հետևաբար նաև գրավոր ներկայացնեն մերժումը»: Տիգրան Կյուրեղյանը հղում է անում «Ընտրական օրենսգրքին»՝ ՀՀ-ում հաշվառում չունեցող ՀՀ քաղաքացիները, այդ թվում՝ Արցախում հաշվառված, օկուպացված և հանձնված տարածքների բնակիչները, որոնք

գտնվում են ՀՀ տարածքում, կարող են մասնակցել ընտրություններին՝ նախապես գրանցվելով անձնագրային սեղաններում. (https://www.aravot.am/2021/06/05/1195940/):

Ընտրական իրավունքին տեր կանգնելու այս նախադեպը օրինակ է դառնում նաև մյուս արցախցիների համար:

**Արարատի մարզի** Սուրենավան գյուղում է կնոջ և երեխայի հետ հիմնվել Կովսականի բնակիչ, 30-ամյա Նժդեհ Մադոյանը: Կնոջ ծնողների տունն է: Գյուղատնտես է, Կովսականում աշխատել է որպես գյուղբաժնի առաջատար մասնագետ: Մեծ հարգանք է վայելել, առաջադրվել է քաղաքապետի թեկնածու: Արցախից ստացված փոխհատուցման գումարով Սուրենավանում ընկերոջ հետ հողակտոր են վարձակալել, ձմերուկ ցանել: Եկամտից գոհ է, մտադիր է մյուս տարի ընդլայնել գյուղատնտեսական բիզնեսը:

**Լոռու մարզի** Օձուն գյուղում է տեղավորվել Նժդեհի մայրը՝ 53-ամյա Լեռնուհի Իսոյանը: Ապրում է կրտսեր որդու՝ 27-ամյա Նարեկի հետ: Տունը տղաների պապենական ժառանգությունն է, որտեղ հորեղբոր կնոջ առաջարկով տեղափոխվել են Կովսականից բռնահանվելուց հետո:

Լեռնուհին ճանաչված ու սիրված անձ է, Քաշաթաղի լեգենդը: Նրա տոկունության ու կամքի մասին հոդվածներ ու ֆիլմեր են պատրաստվել, բայց ինքը խուսափում է իր մասին խոսելուց: Թեև չարաղետ դիպվածի հետևանքով կորցրել է 2 ոտքն ու աջ թևը, բայց իր մեջ ոտքի կանգնելու և տղաներին մեծացնելու ուժ է գտել: Ավելին՝ տաք հագուստ է հյուսում ու բաժանում կարիքավոր մարդկանց.



Նարեկը հողի լեզուն լավ հասկացող, հողը սիրող, օրնիբուն աշխատող երիտասարդ է: Պատմում է Կովսականից անակնկալ դուրս գալու, անկազմակերպ էվակուացիայի, Օձունում հաստատվելու և նոր կյանք սկսելու պատմությունը: Լավ մարդկանց հարցում էլ բախտը բերել է՝ սիրով ու երախտագիտությամբ նշում է «Գազպրոմ Արմենիա» ընկերության Լոռու ԳԳՄ Թումանյանի տարածքային տեղամասի պետ Կարեն Փարեմուզյանի անունը, որի օժանդակությամբ աշխատանքի է տեղավորվել, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Օլեգ Դուլգարյանի ծրագրային օգնության ու այցերի մասին, ցույց է տալիս ամռանը՝ գործին զուգահեռ նորոգած լողասենյակը («որ մամային հարմար լինի»), «Կարիտասի» նվիրած լվացքի մեքենան, «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի կազմակերպած վիճակահանությամբ շահած մոտոբլոկը. (https://youtu.be/ONf9z0sAwXM)

Կովսական քաղաքից բռնահանված և ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղում ապաստանած, բացառիկ ուժի տեր Լեռնուհի Իսոյանի պատմությունը՝ ստորև.

https://www.facebook.com/media/set/?vanity=haysanta01&set=a.2987651511506881:

## Ամփոփում

Աշխատանքն ի մի է բերել թեմային առնչվող նյութերը՝ կատարելով սեփական հետազոտություն և համալրելով այն հայաստանյան լրատվամիջոցներում առկա հրապարակումներով:

«Քաշաթաղից Հայաստան. օրենք և իրավունք» հետազոտության հիմնական արդյունքները՝

- կարիքների վերհանում.

հանդիպումների, այցերի, հեռավար հարցումների և հեռախոսազրույցների արդյունքում խմբավորվել են պատերազմի արհավիրքներով անցած, մարդկային և նյութական ահռելի կորուստներ կրած, տնանկ և իրավազուրկ քաշաթաղցիների կարիքները, քննարկումներ են անցկացվել դրանց հնարավոր լուծումների շուրջ: Կարիքների հիմնական խմբերը հետևյալն են՝ կարգավիճակի որոշակիացում, բնակարանի խնդիր, աշխատանքի իրավունք, կորսված գույքի փոխհատուցում, նախքան պատերազմը Արցախում ձևակերպված վարկային պարտավորությունների զրոյացում և այլն,

- աշխատանքային, կրթական, ստեղծագործական ներուժի գնահատում.

Քաշաթաղցիներն Արցախում բնակվելու տասնամյակների ընթացքում աչքի են ընկել ստեղծագործական մտածողությամբ և մեծ աշխատասիրությամբ. նրանք քարից հաց քամող մարդիկ են՝ հումորով, կրթության և մշակույթի նկատմամբ ընդգծված հակվածությամբ: Բռնահանված շուրջ 800 մանկավարժ Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում ինտեգրվելու փորձեր է անում: Ոմանք արդեն տեղավորվել են մարզային դպրոցներում, մի մասը դեռ աշխատանք է փնտրում: Այս առումով արդյունավետ կարող է լինել «Դասավանդի՛ր, Հայաստա՛ն» կազմակերպության հետ համագործակցությունը:

Հայաստան տեղափոխվելուց հետո Քաշաթաղցի ոսկեձեռիկ կանայք շարունակում են ստեղծագործել և հանրությանը ներկայացնել իրենց արտադրանքը. ՖԲ-ում բացվել է «Ստեղծագործում են Քաշաթաղի կանայք» էջը, որտեղ զետեղված են ձեռագործ գեղեցիկ աշխատանքներ, զարդեր, գորգեր և այլն,

պատմամշակութային կոթողների ցուցահանդես է կազմակերպվել, որի ընթացքում ներկայացվել են Զոհրաբ Ըռքոյանի աշխատանքները. լուսանկարներում 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանին անցած հայկական պատմական կոթողներն են[7],

- իրավագիտակցության բարձրացում.

Քաշաթաղը բնակեցնելու խնդիրները և կոռումպացված իշխանությունների դեմ տասնյակ տարիների պայքարը իրավագիտակից և իրավատեր քաշաթացղիների լայն շերտ է գոյացրել: Հատկապես բռնահանվելուց հետո սեփական իրավունքի գիտակցությունն առաջնային կենսական հարց է դարձել: Քաշաթաղցիներն օգտագործում են կյանքի, կրթության, ընտրության, առողջության և մարդկային կենսագործունեության այլ ոլորտների իրենց իրավունքները պահանջելու հնարավոր պայքարի բոլոր քաղաքակիրթ ձևերը՝ բողոքի ցույցեր, երթեր և այլն, որոնց ընթացքում ակնհայտ լիդերներ են ձևավորվում, հիմնականում՝ կանայք,

- հնարավոր ծրագրային առաջարկների գաղափար.

«Վերադարձ դեպի Քաշաթաղ» հասարակական կազմակերպության հետ կատարված աշխատանքը հանգեցրել է համատեղ ծրագիր իրականացնելու գաղափարին: Քաշաթաղցիների կարիքներին արձագանքող և ծրագրային առաջարկներ ներկայացնող ցանց է սկսել ձևավորվել, որի մեջ ընդգրկված են որոշ ՏԻՄ մարմիններ, բարեգործական կազմակերպություններ, բարերարներ և այլն:

## Մարտահրավերները

Հետազոտությունն իրականացնելու ընթացքում առնչվել ենք որոշ մարտահրավերների, որոնց մի մասի թվարկումը՝ ստորև՝

- կովիդի թվերի կտրուկ աճը. Հայաստանն այս ընթացքում հայտնվել է կորոնավիրուսի տարածման ցուցանիշով ԵՄ սահմանած վտանգավոր՝ կարմիր գոտում: Ելնելով դրանից՝ որոշ ֆիզիկական այցեր փոխարինվել են առցանց ձևաչափի հանդիպումներով: Հայաստանի հեռավոր մարզերի վատ կապի պայմաններում հարցում անցկացնելը լուրջ խնդիրներ է առաջացրել,
- հետազոտության թիրախային խմբերի սոցիալ-հոգեբանական ծանր վիճակը. բռնահանված բոլոր քաշաթաղցիները նյութական և բարոյական լուրջ վնասներ են կրել, տասնամյակների աշխատանքով շենացրած տներ և աշխատանք են կորցրել,

[7] https://www.facebook.com/ArmeniaTVNews/videos/498936857918192

հայրենազրկվել են, շատերը 44-օրյա պատերազմի ընթացքում կորցրել են իրենց որդիներին, ամուսիններին, մերձավորներին,

- իշխանությունների անհամարժեք արձագանքները քաշաթաղցիների խնդիրների վերաբերյալ հարցումներին,
- այլ:

*Պիլոտային հետազոտության մեջ օգտագործվել են լուսանկարներ «Հայ Զմեռ պապ» բարեգործական հիմնադրամի արխիվից, Ռուբեն Մանգասարյանի ալբոմներից, ԶԼՄ-ներից:*